ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
v_melikyan@mail.ru

ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1915–1918 ԹԹ.

Բանալի բառեր՝ Զեմստվային միություն, Համառուսաստանյան քաղաքների միություն, Ալ. Խատիսյան, Նիկոլայ 2-րդ, Ե. Վորոնցով-Դաշկովա, արևմտահայ գաղթականություն, Թիֆլիս:

Առաջին աշխարհամարտի սկզբնական շրջանում Ռուսաստանում ձևավորվեցին հասարակական կազմակերպություններ՝ պատերազմը հաջող վարելու հարցում թիկունքի կազմակերպման և ցարական վարչակարգին աջակցելու նպատակով:

Այդպես ստեղծվեցին նախ՝ Համառուսաստայան զեմստվային միությունը (1914 թ. հուլիսի 30), ապա՝ Համառուսաստանյան քաղաքների միությունը (1914 թ. օգոստոս) և, վերջապես, ռազմարդյունաբերական կոմիտեները (1915 թ. մայիս)[1]:

Վիրավորներին օգնելու գործում զեմստվոների միավորման գաղափարը ձևավորվեց Մոսկվայի զեմստվոյի նախաձեռնությամբ դեռևս ռուս–ճապոնական պատերազմի ժամանակ, երբ դրվեց համազեմստվային կազմակերպության հիմքը: 1914 թվականին այդ կազմակերպությունն ընդգրկում էր 14 նահանգային զեմստվոներ: Առաջին համաշխարհայինի ժամանակ զեմստվոների միավորման

[1] Տե՛ս *Великая Октябрская социалистическая революция,* Энциклопедия, Москва, 1987, с. 179.

ծրագրով դարձյալ հանդես եկավ Մոսկվայի զեմստվոն: 1914 թ. հուլիսի 30–ին, պատերազմի նախօրեին կայացավ նահանգային զեմստվոների ներկայացուցիչների համառուսաստանյան համագումարը, որտեղ և որոշվեց ստեղծել հիվանդ և վիրավոր զինվորների օգնության Համառուսաստանյան զեմստվային միությունը: Միությունը 1914 թ. օգոստոսի 12–ի դրությամբ տիրապետում էր 12 մլն ռուբլու ներդրումների[2]:

Միաժամանակ, նախաձեռնությամբ հանդես եկան և քաղաքային ինքնավարությունները: Քաղաքագլուխների համառուսաստանյան առաջին համագումարը 1914 թ. օգոստոսի 8–9–ի ընթացքում ձևավորեց Քաղաքների համառուսաստանյան միությունը: 1915 թ. հուլիսի 10–ին երկու միությունների գործունեությունը միավորվեց «-Զեմգոր» կազմակերպության մեջ՝ բանակի մատակարարումը իրականացնելու նպատակով, մնացյալ խնդիրների լուծումը երկու կազմակերպություններն էլ առանձին էին իրագործում[3]:

Ռազմաճակատներում առաջին պարտություններից թուլացած ցարիզմը ստիպված և անվստահությամբ հանդուրժեց այդ հասարակական կազմակերպությունների առաջացումը, որոնց գործունեությունը սկզբում սահմանափակվում էր վիրավոր և հիվանդ զինվորների օգնությամբ: 1915 թ. ամռանից երկու միություններն էլ դուրս եկան իրենց գործառույթների շրջանակներից և վերցրին գաղթականության օգնության և բանակը պարենով ու ռազմամթերքով ապահովելու որոշ գործառույթներ, մասնակցեցին տնայնագործական արդյունաբերության մոբիլիզացիայի գործին[4]: Մանրամասնելով հավելենք, որ միությունները զբաղվում էին գլխավորապես

---

[2] Տե՛ս *«Очерки о деятельности Всероссийского союза городов за 1914–1915 гг.»,* Москва, 1916, с. 11.

[3] Տե՛ս **Басилая Ш.И.,** *Закавказье в годы Первой мировой войны.* Сухуми, 1968, с. 172–173.

[4] Տե՛ս նույն տեղում:

հոսպիտալների կահավորմամբ, սանիտարական գնացքների կազմակերպմամբ, դեղորայքի պատրաստմամբ, բժշկական անձնակազմի ուսումնառությամբ, բաղնիքների, լվացքատների բացման, ռազմաճակատներում համաճարակների դեմ պայքարի, ռազմական շինությունների վրա աշխատող բանվորներին սննդով ապահովելու, պարենային կրպակների կազմակերպման, զենքի, հագուստի ու կոշիկի վերանորոգման արհեստանոցների բացման և այլ հարակից աշխատանքներով: Քաղաքների միությունն այս ամենին զուգահեռ իր գործառույթները հիմնականում ուղղում էր փախստականների խնդիրների լուծմանը:

Զեմստվային միության գլխավոր օրգանը նահանգային զեմստվային վարչությունների և նահանգային զեմստվային ժողովների ներկայացուցիչների համագումարն էր, որն էլ ընտրեց գլխավոր կոմիտե և որպես գլխավոր լիազոր՝ կադետական կառավարությանը հարող, կալվածատեր, իշխան Գ. Լվովին:

Քաղաքների համառուսաստանյան միության (այսուհետև ՔՀՄ) տեղական մարմինները քաղաքային կոմիտեներն էին: 1914 թ. օգոստոսին ՔՀՄ-ին անդամակցում էր 140, 1915 թ. վերջին՝ 464 քաղաք: ՔՄ գլխավոր լիազոր ընտրվեց Մոսկվայի քաղաքագլուխ, կադետ Մ. Չելնոկովը[5]:

Ինչպես նշեցինք, պատերազմի սկզբում ցարական կառավարությունը կասկածանքով վերաբերվեց այդ կազմակերպություններ-ի առաջացմանը, դրանց գործունեության մեջ տեսնելով քաղաքական ընդդիմություն:

Այսպես, երբ Պետական դումայի նախագահ Ռոձյանկոն բարձրացրեց զեմստվային վարչությունների միավորման նպատակով համագումար հրավիրելու հարցը, ներքին գործերի նախարար

---

[5] Տե՛ս *«Известия Главного комитета Всероссийского земского союза»,* октябрь, 1916 г., с. 3–5, ըստ՝ **Басилая Ш.И.,** նշվ. աշխ., էջ 173:

Մակլակովը մերժելով այն հայտարարեց, թե «մենք գիտենք ձեր համագումարները, դուք պարզապես ուզում եք ճտկակոշիկների (сапог) անվան տակ համագումար հրավիրել, որտեղ և կներկայացնեք և ձեր պահանջները, ինչպես օրինակ պատասխանատու նախարարության ստեղծում, միգուցե և հեղափոխություն»[6]:

Նման դիրք գրավեց և կառավարության նախագահ Ի. Գորեմիկինը[7]: 1916 թ. սեպտեմբերի 12–14–ը Մոսկվայում տեղի ունեցավ երկու միությունների միացյալ համագումարը, որի բանաձևը պահանջում էր իշխանության նորացում և կառավարության կազմում բուրժուազիայի ներկայացուցիչների ընդգրկում[8]:

Իրոք, այդ առաջարկները բխում էին «Պրոգրեսիվ բլոկի» ներկայացուցիչներից, որոնք ավելի ուշ՝ 1917 թ. փետրվարին, իրականացրին պետական հեղաշրջում Ռուսաստանում՝ գահընկեց անելով Նիկոլայ 2-րդին:

Հակապետական գործունեության համատեքստում այս հաստատությունները օգտագործում էին նաև բոլշևիկները, մասնավորապես, Արևմտյան ռազմաճակատում դա իրականացնում էր Մ. Ֆրունզեն[9]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ԶՄ և ՔՄ ղեկավար գործիչները մտան Ժամանակավոր կառավարության կազմի մեջ: Չընդունելով բոլշևիկյան հեղաշրջումը, նրանք մասնակցում էին սաբոտաժի և «հակահեղափոխական» խռովությունների կազմակերպմանը: 1918 թ. հունվարի 4 (17)–ի ժողկոմխորհի դեկրետով երկու կոմիտեներն էլ լուծարվեցին, նրանց ունեցվածքը տրվեց ժողովրդական տնտեսության համառուսաստանյան խորհրդին: Ար-

---

[6] Տե՛ս **Басилая Ш.И.,** նշվ. աշխ., էջ 174:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս Российский Государственный Военноисторический архив – РГВИА, ф. 369, оп. 1, д. 205, лл. 230–231, ըստ՝ **Басилая Ш.И.,** նշվ. աշխ., էջ 177–178:

[9] Տե՛ս *Великая октябрская* …, с. 179.

տասահման տեղափոխած միջոցները ծառայեցին սպիտակ շարժման և էմիգրացիայի ֆինանսավորմանը[10]:

ՔՀՄ կովկասյան բաժանմունքն առաջացավ ավելի ուշ: Ալ. Խատիսյանն իր «Քաղաքապետի մը Յիշատակները» հուշագրության մեջ նշում է այդ առթիվ. «Պատերազմը սկսվեց... երևացին առաջին վիրավորները, Կովկաս հասան առաջին գաղթականները: Ջանքերն ուղղվեցին երկու խնդիրների վրա՝ օգնել վիրավորներին և կազմակերպել գաղթականության օգնութեան գործը: Իսկոյն կազմուեցան երեք մեծ միութիւններ: Քաղաքների Միութիւնը պարփակեց իր մէջ Ռուսաստանի բոլոր քաղաքները, բացի Կովկասէն»[11]:

Նիկոլայ 2-րդը ամեն կերպ փորձում էր սահմանափակել այդ կազմակերպությունների գործառույթները: Նա նույնիսկ հրաժարվեց ընդունել միությունների, այդ թվում և կենտրոնական ռազմաարդյունաբերական կոմիտեի նախագահ Ա. Գորչկովին, կարգադրելով հաղորդել նրանց, որ «աննորմալ է համարում միությունների ներխուժումը քաղաքականություն, այն էլ՝ շրջանցելով կառավարությունը»: Բայց, 1915 թ. գալիցիական ջախջախումից հետո, երբ կառավարությունն անզոր գտնվեց հոգալ վիրավորների և փախստականների կարիքները, ցարական վարչակարգը տեղի տվեց:

Տեղին է նշել նաև, որ միությունները պատերազմի ընթացքում տիրապետում էին ահռելի գումարների: Միջոցները ձևավորվում էին ինչպես նվիրատվություններից, այնպես էլ տեղական կազմակերպությունների հատուկ անդամավճարներից և, գլխավորապես, պետական, կառավարական ասիգնացիաներից: 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ միայն ԶՄ–ը կառավարությունից ստացավ 152 մլն

---

[10] Տե՛ս նույն տեղում:

[11] **Ալեքսանդր Խատիսեան,** *Քաղաքապետի մը Յիշատակները,* Պէյրութ, 1991, էջ 235–236:

ռուբլի: Երկու միությունների ստացած ընդհանուր գումարը 1916 թ. ամռանը կազմեց 500 մլն ռուբլի[12]:

Անդրկովկասում երկու միությունների գործունեության սկիզբը դրվեց 1914 թ. նոյեմբերի սկզբին, երբ ԶՄ լիազորներ Շլիպպեն և Շերեմետևը, ինչպես նաև ՔՄ գլխավոր լիազոր Մ. Չելնոկովը ժամանեցին Թիֆլիս: Անմիջապես մշակվեց ամբողջ Կովկասի տարածքում թիկունքային բժշկասանիտարական աշխատանքների բաշխման նախագիծը: ԶՄ-ին բաժին հասավ Հյուսիսային Կովկասում 25 հազար մահճակալով հոպիտալների կազմակերպումը[13]:

Այդ կազմակերպությանը հանձնարարվում էր նաև 15 սանիտարական գնացքների համալրման գործը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ կովկասյան վարչակարգի սրտով չէր հասարակական կազմակերպությունների գործունեությունը, ուստի, վերջինս ամեն ինչ արեց, որպեսզի այդ կազմակերպությունների ներկայացուցիչները չհայտնվեն Կովկասյան ռազմաճակատում: Ինչպես Կովկասում, այնպես էլ Արևմտյան ճակատում ցարական իշխանությունները ցանկանում էին ռազմաճակատներից հեռու պահել այդ գործիչներին՝ նրանց բազմաշերտ գործունեության մեջ տեսնելով ընդդիմադիր, հակապետական, այդպիսով և ճակատները կազմալուծող գործոն:

Քաղաքների միության ստեղծման նախաձեռնությունն ի պաշտոնե, որպես Թիֆլիսի քաղաքագլուխ, ստանձնեց Ալ. Խատիսյանը: Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ Ալեքսանդր Խատիսովը Թիֆլիսի քաղաքագլուխ է նշանակվել 1908 թ. հունվարի 7-ի նիստում: Տվյալ պահին Ա.Ի. Խատիսովը Թիֆլիսի Նիկոլաևյան քաղաքային ուսումնարանի բժիշկն էր և Թիֆլիսի բանտերի հոգաբարձուների կոմիտեի տնօրենը: Ծառայողական ցուցակում նշվում

[12] Տե՛ս **Басилая Ш.И.,** նշվ. աշխ., էջ 174–175:
[13] Տե՛ս նույն տեղում, էջ 182:

էր, որ նա 34 տարեկան է, չամուսնացած, հայ–գրիգորյանական հավատի[14]:

Նա 1914 թ. հոկտեմբերի վերջին հրավիրեց երկրամասի 44 մեծ ու փոքր քաղաքների ներկայացուցիչների համագումար, որը Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Բաթումի, Փոթի, Քութայիսի, Վլադիկավկազի, Մայկոպ և Գոզնի ներկայացուցիչներից ընտրեց գործադիր մարմին: Այդ պաշտոնը մինչև պատերազմի ավարտը ղեկավարեց ինքը՝ Ալ. Խատիսյանը: Վերջինիս կարծիքով և տպավորությամբ ոչ հիմնադիր համագումարի և ոչ էլ հետագա ժամանակահատվածում «նկատելի չէր ազգային հակամարտություն. բոլորն ալ մեծ պատրաստակամութեամբ կ'ուզեին օգնել վիրաւոր զինուորներուն»[15] չնայած, որ կազմակերպության մեջ հայերը առաջնակարգ դեր էին ստանձնել: Ալ. Խատիսյանի օգնականներն էին հայկական ազգային ազատագրական շարժումների և հասարակական–քաղաքական անվանի գործիչներ Հ. Արղությանը (Իշխան), Վ. Թամամշևը, բժիշկ Մարգարյանը և Հ. Խունունցը: Ավելի ուշ, երբ հիմնականում ավարտվեց Արևմտյան Հայաստանի գրավման գործընթացը, ՔՄ հիմնարկությունների ցանցն ավելի ընդարձակվեց, վերջինիս անդամակցեցին Հ. Օհանջանյանը, բժիշկ Ա. Բաբայյանը, Խ. Կարճիկյանը, Ռ. Տեր-Մինասյանը[16]: Քաղաքներից յուրաքանչյուրում «Միությունն» ուներ իր կոմիտեն: 1915 և 1916 թթ. «քաղաքների համագումարները» սկսեցին ձեռք բերել քաղաքական երանգավորում: Միությունում ծառայողների թիվը 19.000 էր[17]: Ալ. Խատիսյանի կարծիքով, ստեղծված իրադրության պայմաններում Քաղաքների միությունը միակ հարթակն էր, որտեղ լավա-

[14] Национальный архив Грузии (НАГ), ф. 13, оп. 2, д. 1532, л. 1.

[15] Տե՛ս **Ալեքսանդր Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 237:

[16] Տե՛ս նույն տեղում, էջ 238:

[17] Տե՛ս **Ալեքսանդր Խատիսյան,** Անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր, աշխ.՝ Վլադիմիր Հարությունյանի, Երևան, 2023, էջ 262, 268:

գույնս կարող էին իրենց դրսևորել հայ գործիչները, մանավանդ, որ ՔՄ-ը սկսում էր զբաղվել նաև գաղթականական գործերով: Որպես անկախ կազմակերպություն Կովկասյան Քաղաքների միությունը գործեց միայն մեկ ամիս: Այն բանից հետո, երբ Թիֆլիս ժամանեցին Մ. Չելնոկովն ու նրա տեղակալ Ն. Կիշկինը, նրանք Ալ. Խատիսյանին առաջարկեցին միանալ ռուսական քաղաքների ընդհանուր միությանը: Առաջարկությունն ընդունվեց այն համաձայնությամբ, որ տեղական խնդիրների հարցում Կովկասյան միությունը պահպանի ներքին անկախությունը: Ալ. Խատիսյանը Մ. Չելնոկովի հետ հյուրընկալվեց փոխարքայի կողմից, որին ՔՄ նախագահը հանձնեց մեկ միլիոն ռուբլու չեկ՝ Կովկասի կարիքների համար: Ալ. Խատիսյանն ընդգծում էր, որ կառուցվածքային միացումը մեծապես նպաստեց հենց հայերին, քանի որ 1915 թվականից սկսված գաղթականության հոսքի պայմաններում, ցարական վարչակարգը նկատելիորեն նպաստեց գաղթականների օգնության գործին[18]:

1914 թ. նոյեմբերի 9–10-ը կայացավ կովկասյան քաղաքների բյուրոյի նիստը, որտեղ քննարկվեց Կովկասյան ռազմաճակատում հիվանդների ու վիրավորների օգնության կազմակերպման հարցը: Որոշվեց հոսպիտալները համալրել 45 հազար մահճակալով, որից 25 հազարը՝ Անդրկովկասում:

Ալ. Խատիսյանի հետ կայացվեց նաև մեկ այլ համաձայնություն, ըստ որի հաստատվեց ԶՄ և ՔՄ միջև տրանսպորտային, կոմունիկացիոն ուղղությունների տարանջատումը: Ըստ այդմ, Քաղաքների միության վերահսկողության տակ էր անցնում Կարս-Սարիղամիշ, իսկ Մերձբաթումյան, Կարս-Օլթի, Երևան-Էջմիածին ու Ջուլֆա-Ուրմիա ուղղությունների կահավորումը թողնվում էր Զեմստվային միությանը: ՔՄ ստանձնում էր նաև Թիֆլիսի, Անդրկով-

[18] Տե՛ս նույն տեղում, էջ 238–239:

կասի այլ քաղաքների, ինչպես նաև Վանի, Սարիղամիշի ուղղությունների լազարեթների կահավորման և սպասարկման գործը:

Ռազմական գործողությունների ծավալմանը զուգընթաց ՔՄ իր գործունեության սահմանները ընդարձակեց մինչև Արևմտյան Հայաստանի գրավված վայրերը ու մինչև Պարսկաստան: Ծառայողների թիվը հասավ 10 հազարի, այդ թվում՝ բժիշկներ, սանիտարներ, գթության քույրեր և գրասենյակային պաշտոնյաներ[19]:

1914 թ. նոյեմբերի 26-ին (դեկտեմբերի 1-ին վերադարձավ Ս. Պետերբուրգ – Վ.Մ.) Նիկոլայ 2-րդը այցելեց Թիֆլիս. նա նպատակ ուներ տեսնել Կովկասը, Թիֆլիսն՝ իր հիվանդանոցներով, ինչպես նաև մտածում էր ծանոթանալ Կովկասյան ռազմաճակատի իրադրությանը: Այդ մասին փոխարքա Ե. Վորոնցով-Դաշկովի տեղակալը հայտնեց Ալ. Խատիսյանին և վրաց ազնվականության առաջնորդ իշխան Աբխազին: Ցարին ուղեկցում էր Ալ. Խատիսյանը, ուշագրավ է, որ Թիֆլիսի հիվանդանոցներից մեկում նա Նիկոլայ 2-րդին ներկայացրեց Բայազետի մոտ վիրավորված Դրոյին[20]:

Քաղաքային վարչությունը ցարի պատվին ընդունելություն կազմակերպեց, որին մասնակցում էր 600 քաղաքացի: Ալ. Խատիսյանն իր ելույթի մեջ անդրադարձավ գավառական ինքնավարությունների, բարձրագույն դպրոցի, երդվյալ ատենակալների ինստիտուտի և այլ կենսական խնդիրների: Պատասխան ճառում Նիկոլայ 2-րդը, փաստորեն չպատասխանելով քաղաքապետի հարցադրումներին, պարզապես ոգևորիչ խոսքեր շռայլեց՝ Կովկասն անվանելով «ռուսական թագի ամենալավ գոհար»: Ցարին այցելեց նաև հայկական պատվիրակությունը՝ Ալ. Խատիսյանի, Սամսոն Հարությունյանի և Ամենայն հայոց կաթողիկոսի մասնակցությամբ: Հայ բարեգործական և կրթական հաստատությունների կողմից

---

[19] Տե՛ս **Басилая Ш.И.,** նշվ. աշխ., էջ 183:

[20] Տե՛ս **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 239–240:

ելույթ ունեցավ Ս. Հարությունյանը, նշելով, որ «պատերազմը և հաղթանակը վերջապես բավարարություն պիտի տան հայ ժողովրդի ազգային պահանջներուն»: Պատասխանելով նրան ու Գևորգ 5-րդ Ամենայն Հայոց կաթողիկոսին, Նիկոլայ 2-րդը նշեց, որ հայ ժողովրդին սպասում է փայլուն ապագա[21]:

Նիկոլայ 2-րդի Թիֆլիս ժամանելու օրը՝ նոյեմբերի 26-ին, ԶՄ Մուսին-Պուշկինի, Կարմիր խաչի գլխավոր լիազոր Կնորինգի և Կովկասյան քաղաքների միության բյուրոյի նախագահ Ալ. Խատիսյանի միջև կնքվեց համաձայնագիր, որը և սահմանեց ՔՄ իրավասությունների շրջանակը: ՔՄ գործունեության առաջին իսկ օրերից նրա կազմի մեջ մտան հետևյալ կոմիտեները՝ Բաքվի, Բաթումի, Վլադիկավկազի, Գորիի, Դերբենդի, Եկատերինոդարի, Ելիզավետպոլի, Պետրովսկի, Սարիղամիշի և Թիֆլիսի: Գաղթականության օգնության համատեքստում ներգրավվեցին Ալեքսանդրապոլի, Արմավիրի, Դիլիջանի, Ելիզավետպոլի, Իգդիրի, Ղարաքիլիսայի, Կարսի, Գետաբեկի, Նոր Բայազետի, Սալմաստի, Երևանի, Էջմիածնի, Աննենֆելդի կոմիտեները:

Եթե սկզբնական շրջանում ՔՄ գործառույթները սահմանափակվում էին լազարեթային ու վիրավոր, հիվանդ զինվորների էվակուացիայի գործունեությամբ, ապա Սարիղամիշի դեկտեմբերյան մարտերից հետո ավելացավ սննդի կայանների, թեյարանների, սանիտարատրանսպորտային ջոկատների կազմակերպման գործը: 1914 թ. դեկտեմբերի վերջին Սարիղամիշը վերածվել էր բծավոր տիֆի օջախի[22]: Համաճարակների դեմ պայքարը ահագնացող ծավալներ ստացավ 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, երբ Հայոց ցեղասպանության հետևանքով գաղթականության հոծ զանգվածները մտան Անդրկովկաս ու Հայաստան:

---

[21] Տե՛ս **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 240–241:
[22] **Басилая Ш.И.,** նշվ. աշխ., էջ 187:

Արևմտահայ գաղթականության վիճակի, կենսական խնդիրների ու դրանց լուծման ուղղությամբ ՔՄ կատարած աշխատանքը 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում ամփոփված է «Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915 г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемиями среди них» գրքույկում[23]:

Միայն 1915 թ. հուլիսի 20-26-ը Արևելյան Հասատան էր գաղթել 150 հազար փախստական: Նրանց մեծ մասը հանգրվանել էր Երևանի նահանգում, մասնավորապես, Էջմիածնում, որտեղ նրանց թիվը հասնում էր 35 հազարի: Զբաղեցնելով վանքապատկան տարածքները, բայց հիմնականում բաց երկնքի տակ օրական մահանում էր շուրջ 400 մարդ[24]: Ստանալով կառավարական համաձայնությունը և տեղում գաղթականների կարիքներին և անհրաժեշտ օգնություն ցույց տալու չափերին ծանոթանալու նպատակով Ն. Կիշկինը շրջայց իրականացրեց գաղթականներով լեցուն շրջաններում և արդյունքները ներկայացրեց կոմսուհի Ե. Վորոնցով-Դաշկովային, որը պատերազմից տուժածներին օգնություն ցույց տվող Կովկասյան գլխավոր կոմիտեի նախագահն էր: Հիշարժան է, որ երբ կովկասյան թաթարների ներկայացուցիչները դիմեցին կոմսուհուն, խնդրելով Կոմիտեի աջակցությունը Կարսի թաթար գաղթականների համար, Ե. Վորոնցով-Դաշկովան պատասխանեց. «ես չեմ ճանաչում թաթար գաղթականներ, ճանաչում եմ միայն թաթար դավաճաններ»[25]: Կոմսուհին չողջունեց նաև Բաքվի թաթարական Բարեգործական միության ներկայացուցիչներին: Ալ. Խատիսյանը

---

[23] Տե՛ս «Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915 г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемиями среди среди них», Тифлис, 1915.

[24] Տե՛ս նշվ. աշխ., էջ 1–2:

[25] Տե՛ս **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 250–251:

սթափ կերպով, իհարկե, գնահատում էր այդ քայլը, որն, անշուշտ, չէր նպաստում հայ-թաթարական հարաբերություններին[26]:

Հաշվետու զեկույցը ստացավ կոմսուհու, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ն. Յուդենիչի և Կովկասյան զինվորական օկրուգի հրամանատարի հավանությունը: Անհրաժեշտ միջոցառումների քննարկման նպատակով օգոստոսի 12, 14 և 15-ին հատուկ հրավիրված ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվեցին կովկասյան կոմիտեի նիստեր[27]: Խորհրդակցությունները մշակեցին համաճարակների դեմ պայքարի ընդարձակ ծրագիր: Ն. Կիշկինի առաջարկությամբ, որին մշտապես ուղեկցում էին Երևանի քաղաքագլուխ Ս. Խաչատրյանը և Հայկական բարեգործական միության կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը, օգոստոսի 15-ի երկու նիստերում կազմվեց նախահաշիվ՝ 1.103.250 ռուբլու ծախսերի սահմաններում[28]: Նույն օրերին «Հորիզոնը» հայտնում էր, որ համաճարակների դեմ պայքարի նպատակով հատկացվել է 200 հազար ռուբլի[29]: Բացի այդ գումարից, ՔՄ Կովկասյան կոմիտեն ստացավ 150 հազար ռուբլի, իսկ Ալ. Խատիսյանի հատուկ զեկույցի արդյունքում ևս 40 հազար ռուբլի[30]: Բացվեցին սննդի 12 կետեր, վարակիչ հիվանդությունների բաժանմունքներով հիվանդանոցներ, Էջմիածնում՝ 570, Երևանում՝ 200, Ալեքսանդրապոլում՝ 200, Իգդիրում՝ 50, Դիլիջանում՝ 50, Աննենֆելդում՝ 50, Գետաբեկում՝ 50 մահճակալով[31]:

Ե. Վորոնցով-Դաշկովային ուղղված Ն. Կիշկինի հաշվետվությունը ևս ամփոփում էր տվյալ ժամանակահատվածում իրականաց-

---

[26] Տե՛ս նույն տեղում:
[27] Տե՛ս նշվ. աշխ., էջ 4
[28] Տե՛ս նույն տեղում, էջ 6:
[29] Տե՛ս Հորիզոն, Թիֆլիս, 1915, 21 օգոստոսի, թիվ 187:
[30] Տե՛ս *Краткое сведение,* էջ 9:
[31] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

ված միջոցառումների ընդհանուր պատկերը: Ներկայացնելով ծանր իրավիճակը Ն. Կիշկինը արդարացիորեն ընդգծում էր, որ գաղթականների օգնության խնդրին վերաբերվել զուտ բարեգործական տեսանկյունից անընդունելի է. «այդ հարցն ունի համապետական նշանակություն»[32]:

Նրա դիտարկմամբ, գաղթականների շրջանում անհնար էր հանդիպել առողջ մարդու, 3000-ից ավելի հայ երեխաներ մնացել էին առանց ծնողների, հիվանդություններից յուրաքանչյուրը կարող էր և արդեն վերածվել էր համաճարակի և այլն[33]:

Առանձին հաշվետվությամբ հանդես եկավ և Ալ. Խատիսյանը, մասնավորապես Էջմիածնում կուտակված գաղթականության վերաբերյալ: Հաղորդումը մահասարսուռ տպավորություն էր թողնում. միայն Էջմիածնի գերեզմանոցում առկա էր 600 չթաղված դիակ: Սոսկալի իրավիճակ էր նաև Սալմաստում, Ջուլֆայում և այլուր[34]:

Հետևելով ժամանակի պարբերական մամուլի հրապարակումներին, կարելի է առանձնացնել որոշ թվական տվյալներ, հրատապ հարցադրումներ:

ՔՄ կովկասյան բաժանմունքի բյուրոյի 1915 թ. օգոստոսի 9-ի, 30–ի բյուրոյի նիստերում որոշվեց փախստականների շարժման ճանապարհներին բացել սննդի կետեր, թեյատներ, շարժական բաղնիքներ, բժշկասանիտարական շարժական խմբեր, ի դեպ՝ սննդի կետերը պետք է կառուցվեին իրարից 15 վերստ, իսկ թեյարանները՝ 10 վերստ հեռավորության վրա: Այդ ամենի համար Ն. Կիշկինը հատկացրել էր 15.000 ռուբլի[35]: Համաճարակների դեմ

[32] Տե՛ս նույն տեղում, էջ 16–17:
[33] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[34] Տե՛ս նույն տեղում, էջ, էջ 22–23:
[35] Տե՛ս Հորիզոն, 1915, 9 օգոստոսի, թիվ 178:

պայքարի նպատակով էլ հատկացվող 300 մահճակալի տեղադրման ծախսերը կազմում են 713 հազար ռուբլի[36]:

1915 թ. սեպտեմբերին, փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի միջնորդությամբ, Ռուսաստանի կառավարությունը արևմտահայ փախստականների կարիքների համար հատկացնում է 300 հազար ռուբլի: Պատերազմից տուժածներին օգնող կովկասյան գլխավոր կոմիտեն, իր հերթին, Երևանի նահանգապետին է փոխանցում 450.000 ռուբլի: Մինչև սեպտեմբերի 3-ը ՔՄ կովկասյան գլխավոր կոմիտեն արևմտահայ փախստականության օգտին ստացել էր 919.247 ռուբլի[37]: ՔՄ բժշկական գլխավոր տեսուչ Լ. Մյասնիկովի զեկուցման համաձայն, կովկասյան 44 գաղթականների բժշկական օգնությանը հատկացրել էին 76.300 ռուբլի, որից 40 հազարը տրամադրվել էր Էջմիածնի հիվանդանոցին[38]:

Հոկտեմբերին արևմտահայ փախստականներին տրամադրված ընդհանուր գումարը կազմում էր արդեն 7 միլիոն 193 հազար ռուբլի[39]. դեկտեմբերին ստացվել էր ևս 600 հազար ռուբլի[40]:

Առավել տագնապալի իրավիճակ էր տիրում Արևմտյան Հայաստանում:

Վանի վիլայեթի ընդհանուր պատկերն արտացոլված է ՔՄ կովկասյան կոմիտեի Վանի լիազոր Ա. Աթանեսյանի կողմից 1916 թ. մարտին ԿԿ-ին ներկայացված հաշվետվությունում: Եթե մինչև պատերազմի սկիզբն ու Մեծ եղեռնը նահանգի 350.000 բնակչության ընդհանուր թվից հայերը կազմում էին 185.000–ը (թուրքեր՝ 47.000, նստակյաց քրդեր՝ 32.000, քոչվոր քրդեր՝ 40.000, եզդիներ՝ 25.000, ասորիներ՝ 18.000, գնչուներ՝ 3000), ապա 1915 թ.

---

[36] Տե՛ս նույն տեղում, 30 օգոստոսի, թիվ 195:
[37] Տե՛ս նույն տեղում, 3 սեպտեմբերի, թիվ 198:
[38] Տե՛ս Արև, Բաքու, 1915, 26 սեպտեմբերի, թիվ 157:
[39] Տե՛ս Ազգ, Բոստոն, 1915, 12 հոկտեմբերի, թիվ 15:
[40] Տե՛ս Հորիզոն, 1915, 12 դեկտեմբերի, թիվ 277:

Վանի «հուլիսյան նահանջից» հետո ու մինչև 1916 թ. գարունը ընդհանուր 15.000 թվից հայերը մնացել էին 11.000, քրդերը՝ 3000, ասորիները՝ 500, եզդիները՝ 400, թուրքերը՝ 85: Միայն հուլիսյան նահանջի ժամանակ, 34 օրվա ընթացքում մահացավ 8000, իսկ տարատեսակ հիվանդություններից, ցրտից ու ծանր պայմաններից՝ 20.000 մարդ[41]: Լիազոր Ա. Աթանեսյանը, մանրամասն ներկայացնելով հայերի մարդկային ու նյութական կորուստների չափը, ակնկալում էր թե հայկական և թե կենտրոնական նպաստամատույց կազմակերպությունների և, իհարկե, Քաղաքների միության աջակցությունը:

Կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղավորման լիազորը 1916 թ. օգոստոսի 22-ին հանգամանալից հաշվետվություն է ներկայացնում Բայբուրդի, Դերսիմի, Էրզրումի և Երզնկայի շրջաններում կուտակված հայ գաղթականության վիճակի մասին[42]:

Արևմտահայ գաղթականության օգնության հիմնախնդրի համատեքստում հարկ է նշել այն հանգամանքը, որ հաճախ ՔՄ կովկասյան բաժանմունքի կենտրոնական կոմիտեն համակարգված կերպով որոշակի գումար էր ստանում կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղավորման գործերի գլխավոր լիազոր, գեներալ-մայոր Վ. Թամամշևից:

Նմանատիպ հաղորդումներով «Հորիզոնը» հանդես է գալիս 1916 թ. հունիս, դեկտեմբեր ամիսներին և հայտնում, որ համապատասխանաբար փոխանցվել է 500 հազար ռուբլի[43]: Պատահում էր նաև, որ հատկացվող գումարը երկուստեք ուշանում էր. ՔՄ կողմից 700 հազար ռուբլին չստանալու պատճառով, կոմիտեն, իր ընթա-

---

[41] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 520, ց 1, գ. 40, թ. 54-56:

[42] Տե՛ս նույն տեղում, թթ. 79–80: Տե՛ս հանգամանորեն՝ **Арутюнян А.А.,** *Первая мировая война и армянские беженцы (1914–1917 гг.),* Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989:

[43] Տե՛ս Հորիզոն, 1916, 18 հունիսի, թիվ 134, 13 դեկտեմբերի, թիվ 277:

ցիկ կարիքները հոգալու համար, 400 հազար ռուբլի վերցրել էր վաճառականական բանկից[44]:

Մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը՝ զանազան կազմակերպությունների միջոցով ծախսվեցին արևմտահայ գաղթականությանը տրամադրված ահռելի գումարներ. այսպես՝ արևելահայությունը նվիրաբերեց 4 միլիոն 580 հազար ոսկի ռուբլի, սփյուռքը՝ 620 հազար ռուբլի, ռուսական կառավարությունը՝ 1 միլիոն 700 հազար ռուբլի, քաղաքագլխի անգլիական հիմնադրամը՝ 670 հազար ռուբլի: Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (Օզակոմ) հատկացրեց 10 միլիոն 252 հազար ռուբլի[45]: Ռուս բարձրաստիճան զինվորականության կողմից երբեմն հնչում էին նաև քննադատական ու բողոքի ելույթներ այն մասին, որ նախ՝ ՔՄ պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը հայերն էին, ապա և՝ ՔՄ գլխավորապես զբաղված է արևմտահայ գաղթականների գործերով, անտեսելով վիրավոր զինվորների խնամքի գործը: «Մեր գործունեության առաջին տարին իսկ,- վկայում է Ալ. Խատիսյանը,- մեր դեմ ունեցած հազիվ նշմարելի դժգոհությունները պատերազմի վերջին տարիներուն փոխվեցան բացահայտ սառը վերաբերմունքի»[46]:

Անդրկովկասյան վարչակարգն, իր հերթին, երկակի դիրքորոշում էր ցուցաբերում հասարակական կազմակերպությունների նկատմամբ: Մի կողմից՝ նրանց աճին զուգընթաց, մասնավորապես՝ ՔՄ վրա դրվում էին նոր պարտականություններ ու գործառույթներ, մյուս կողմից՝ աճում էր դրանց հանդեպ անվստահության, կասկածամտության վերաբերմունքը, ինչը երբեմն հասնում էր հետապնդումների աստիճանի: Անվստահությունն արտահայտվում էր նաև այն բանում, որ սահմանափակվում էր միությունների ղեկա-

[44] Տե՛ս նույն տեղում, 17 հուլիսի, թիվ 158:
[45] **Խատիսեան Ալ.,** նշվ. աշխ., էջ 252:
[46] Տե՛ս նույն տեղում:

վար մարմինների մեջ տեղական ուժերի ներգրավվածությունը: Այդ հարցում ցարական վարչակարգը հենվում էր մեծապետական տրամադրություններով տոգորված ռուս կապիտալիստների ու կալվածատերերի աջակցության վրա: Ա. Խատիսյանն այդ անցումային փուլը բնութագրում է հետևյալ կերպ՝ «Մարտյան հեղափոխությունից հետո պատկերը սկսեց փոխվել մեկ այլ իմաստով. «Քաղաքների Միության» շրջանում այդպես սկսեցին դրսևորվել ազգայնական միտումներ, օրինակ՝ միտում առաջ եկավ Միության Բաթում շրջանում ծառայողների մեջ ուժեղացնել վերացական տարրը, իսկ Բաքվի շրջանում՝ Թաթարականը: Որոշ շրջանների շուրջ, հատկապես Կարս-Արդահան-Օլթի ուղղությամբ վեճեր էին ծագում: Ազդեցության համար վիճում էին հայերը, վրացիները, թաթարները: Փոխադարձ վստահություն չկար, բացակայում էր»[47]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո հասարակական կազմակերպությունների, այդ թվում և Քաղաքների միության գործառույթները որոշակի ձևափոխության են ենթարկվում՝ հարմարվելով ժողովրդավարացման ընդհանուր գործընթացներին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում էր Քաղաքային դումաների ընտրությունների համատեքստում ՔՄ կոմիտեների կազմի վերընտրության խնդրին:

Այսպես, 1917 թ. սեպտեմբերին Համառուսաստանյան քաղաքների միության անդրկովկասյան բաժանմունքի լիազորը, որը այլևս Ալ. Խատիսյանը չէր, դիմում էր ՀՔՄ Ալեքսանդրապոլի կոմիտեի նախագահին՝ հայտնելով կենտրոնական կազմակերպության օգոստոսի 16-ի շրջաբերականի բովանդակությունը: Ըստ այդմ, բարձրացվում էր այն կենսական հարցադրումը, թե նախատեսվո՞ւմ էր, արդյոք, 1914 թ. սեպտեմբերի 28-ի և 1917 թ. հուլիսի 29-ի որոշումների հիման վրա կազմավորված ՔՄ կոմիտեների վերընտրություն:

[47] Տե՛ս **Ալեքսանդր Խատիսյան,** Անտիպ գործեր, էջ 294–295:

Ի գիտություն տեղական կոմիտեների հստակեցվում էր, որ Քաղաքային դումաների նոր ընտրությունների հետ կապված պետք է վերընտրվեն և ՀՔՄ տեղական կոմիտեները՝ հենց նոր ընտրված դումաների կազմից[48]:

Խնդիրը պարզեցնում է Ալեքսանդրապոլի Քաղաքային վարչության սեպտեմբերի 13-ի նիստի արձանագրությունը, ըստ որի նորընտիր դումայի սեպտեմբերի 6-ի նիստի որոշմամբ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ էր ընտրվել Ալ. Խատիսյանը՝ փոխարինելով Ա. Բարսամովին: Վարչության կազմում ընտրվել էին Նավասարդյանը, Շարաֆյանը և Ամատունին[49]: Սեպտեմբերի 19-ին Երևանի նահանգային կոմիսարիատի նախագահ Ս. Խաչատրյանն իր հերթին հաստատում է այդ որոշումը[50]:

Թիֆլիսի Քաղաքային դուման որոշում է սեպտեմբերի 7-ին հրավիրել 5-րդ Համակովկասյան քաղաքային համագումար՝ տեղական ինքնավարության մարմինների հետ կապված հարցերը քննարկելու նպատակով: Թիֆլիսին ու Բաքվին հատկացվելու էր ներկայացուցչական 3, նահանգային այլ քաղաքներին՝ 2 և գավառական քաղաքներին 1-ական տեղ:

Լսվելու էին տարբեր տիպի քաղաքներում ֆինանսական համակարգերի, պարենավորման, վառելանյութով ապահովելու, քաղաքների քաղաքացիական կառավարման, բանվորական հարցի, քաղաքային վարչությունների և քաղաքների բանվորների ու ծառայողների փոխհարաբերությունների, Սահմանադիր ժողովի ընտրություններին քաղաքների մասնակցության խնդիրները[51]: Ալ. Խա-

---

[48] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2587, թ. 1:
[49] Տե՛ս նույն տեղում, թ. 17:
[50] Տե՛ս նույն տեղում, թ. 26:
[51] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2610, թ. 1:

տիսյանին ուղարկված հրավերում նշվում էր, որ համագումարը բացվելու է հոկտեմբերի 14-ին[52]:

Դեկտեմբերի 1–7-ը Թիֆլիսում կայանում է Կովկասի քաղաքների 7-րդ համագումարը, որը միաժամանակ դառնում է Կովկասի քաղաքային ինքնավարությունների 1-ին Սահմանադիր համագումարը: Այն ընտրվել էր քառանդամ ընտրական համակարգով: Համագումարի աշխատանքները համընկան Սոգորի հաստատությունների զգալի մասի լիկվիդացման փուլի հետ, որոնց նպատակը, ինչպես գիտենք, հիվանդ ու վիրավոր զինվորների օգնության խնդիրն էր[53]:

Այդ կապակցությամբ կարևորվում էր Սոգորի ունեցվածքը թալանից, հափշտակումներից զերծ պահելու և այն երկրամասի զեմստվային ու քաղաքային կարիքների համար՝ տեղական իշխանություններին փոխանցելու հարցը: Միաժամանակ, բարձրացվում էր զինվորական հաստատությունների արագ վերացման ու զորացրման խնդիրը: Համագումարը մեծ ուշադրություն դարձրեց նաև կովկասյան քաղաքների միութան մունիցիպալ ստեղծարար աշխատանքին, այդ թվում՝ մշակվեցին դպրոցների, սանիտարական հաստատությունների և քաղաքային տնտեսության հետ կապված տարաբնույթ հարցեր:

Համագումարը ներկայացնում էր 23 քաղաքների 78 ներկայացուցիչ-պատգամավոր, որոնցից 2-ը Հյուսիսային Կովկասից: Կովկասյան կոմիտեի գործադիր մարմինը վերակազմավորվեց 14 անդամներից բաղկացած Գործադիր բյուրոյի: Կոմիտեի և բյուրոյի նախագահ ընտրվեց Թիֆլիսի նորընտիր քաղաքագլուխ Ն. Էլիավան[54]: ՔՀՄ 28 հոգուց բաղկացած կովկասյան գլխավոր կոմիտեն

[52] Տե՛ս նույն տեղում, թթ. 2, 6:
[53] Տե՛ս նույն տեղում, գ. 2592, թ. 2:
[54] Տե՛ս նույն տեղում:

ընդգրկում էր 7 հայազգի անդամի՝ Խատիսյան (ՀՅԴ), Մարգարյան (էսեռ), Սարգսյան, Արարատյան, Յազջյան: Կոմիտեի կազմում էր նաև ս.-դ. մենշևիկ Ն. Ժորդանիան[55]: Իսկ Գործադիր բյուրոյի կազմում ընտրվում են 4 հայ գործիչներ՝ Խատիսյանը (փոխնախագահ), Յազջյանը (ֆինանսների և զորացրման ու լիկվիդացման բաժնի պետ), Մարգարյանը (բժշկասանիտարական բաժնի պետ) և Սարգսյանը (տեխնիկական-շինարարական և բարեկարգման բաժնի պետ)[56]:

Հեղափոխական ժամանակների շունչն ու մարտավարությունը արտացոլված էր ՔՀՄ Անդրկովկասի երկրամասային կազմակերպության կանոնադրության մեջ: Այդ փաստաթղթում նշվում էր կազմակերպության աշխարհագրական շրջանակը, կենտրոն ընտրվում էր Թիֆլիսը, Գործադիր մարմին էր հռչակվում Երկրամասային կոմիտեն, որն ընտրվելու էր համագումարի կողմից, ամեն տարի, հետևյալ կազմով՝ նախագահ, 3 փոխնախագահ, 34 անդամ, որից 26-ը՝ Անդրկովկասի, 1-ը Դաղստանի, իսկ մնացածը Հ-յուսիսային Կովկասի համար: Երկրամասային կոմիտեն կազմակերպելու էր նաև կոմիտեի խորհուրդներ և բաժիններ, ընտրելու էր ղեկավար գործիչներ[57]:

Դեկտեմբերի 4-ին համագումարն ընդունեց ընթացիկ իրադարձություններին նվիրված բանաձև: Տիրող անիշխանության, մասնատվածության դեմ պայքարի միակ միջոց էր ակնկալվում հեղափոխական դեմոկրատիայի բոլոր ակտիվ ուժերի միավորումը, Սահմանադիր ժողովի անհապաղ հրավիրումը, կենտրոնական իշխանության ձևավորումը, պատերազմի դադարեցման, ազգերի ինքնո-

[55] Տե՛ս նույն տեղում, թ. 5:
[56] Տե՛ս նույն տեղում:
[57] Տե՛ս նույն տեղում, թ. 6:

ռոշման հիմքի վրա և Սահմանադիր ժողովի կողմից հաշտության կնքումը՝ առանց հողագրավումների ու ռազմատուգանքների:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համագումարն ընթանում էր բոլշևիկյան հեղաշրջումից հետո, այն ողջունեց նորընտիր Անդրկովկասյան կոմիսարիատը. ընդգծեց բոլշևիկյան կուսակցության վտանգը և իր աջակցությունը հայտնեց դեմոկրատական իշխանությանը[58]:

Համագումարում բանաձև-հայտարարությամբ հանդես եկավ Ալ. Խատիսյանը՝ ոչ միայն որպես ՔՄ կենտրոնական բյուրոյի փոխնախագահ, այլև որպես Կոմիսարիատի ՀՅԴ խմբակցության նախագահ: Արժևորելով համագումարի կողմից ընդունված բանաձևի դրույթները, նա կարևորեց վերջնական հաշտության կնքման համատեքստում կովկասյան ռազմաճակատի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի պաշտպանության խնդիրը և Կովկասի քաղաքների համաձայնեցված աջակցության գործոնն այդ հարցում[59]:

1918 թ. հունվարի 16-ին ՔՀՄ կովկասյան երկրամասային կոմիտեի նախագահ Ն. Էլիավան հայտնում էր Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանին, որ իր կողմից կազմակերպվել է «քաղաքների գործերով» ինֆորմացիոն բյուրո: Վերջինիս գործառույթների մեջ էր մտնում նաև տեղեկագրերի, ուղեցույցների պատրաստումը, գրադարանների, թանգարանների, ցուցահանդեսների, համագումարների կազմակերպումը, Ռուսաստանի և արտասահմանյան քաղաքային ինքնավարությունների հետ հարաբերությունների ապահովումը[60]:

1918 թ. հունվար-ապրիլ ամիսներին ՔՄ բաժանմունքն ու նրա մասնաճյուղերը գործում էին առավելապես Թուրքիայի կողմից

---

[58] Տե՛ս նույն տեղում, թ. 15:
[59] Տե՛ս նույն տեղում, թ. 16:
[60] Տե՛ս նույն տեղում, թ. 13:

Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում վերսկսված ռազմական գործողությունների իրականության ու դրանից բխող հետևանքների պայմաններում, արձագանքում ու փորձում էին լուծել հայկական ներքին բազում խնդիրներ:

Այսպես, 1918 թ. հունվարի 3-ին Կարսում տեղակայված Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի հակահետախուզության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար պոդպորուչիկ Ժիդկոն հայտնում էր Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությանը, որ Կարսում համապատասխան կենտրոն է ձևավորվել[61]:

Հունվարի 12-ին Ալեքսանդրապոլի բժիշկ Ն. Տեր-Սահակյանը դիմում է քաղաքագլխին, որ քաղաքի ռուս ազգաբնակչության շրջանում անհանգստություն է տիրում և քաղաքը լքելու միտումներ[62]: Երկու օր անց Ալ. Խատիսյանն Ալեքսանդրապոլի քաղաքային վարչություն է հրավիրում իրեն դիմած, հավանաբար, ազգությամբ ռուս քաղաքացիներին՝ հունվարի 15-ին նախատեսվող խորհրդակցության ժամանակ ընթացիկ իրավիճակը քննարկելու նպատակով[63]:

Հունվարի 16-ին արդեն Ալ. Խատիսյանը պաշտոնապես մերժում է «բոլոր կարգի լուրերը» և հանգստության ու համերաշխության կոչ անում համաքաղաքացիներին[64]:

Հունվարի 25-ին Ալ. Խատիսյանին է դիմում Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի տեղակալ Լավրովը՝ կոմիսարիատի պարենային ապրանքները Ժամանակավորապես Ալեքսանդրապոլում պահելու միջնորդությամբ[65]:

---

[61] Տե՛ս նույն տեղում, գ. 2712, թ. 2:
[62] Տե՛ս նույն տեղում, գ. 2704, թ. 2:
[63] Տե՛ս նույն տեղում, թ. 1:
[64] Տե՛ս նույն տեղում, թ. 3:
[65] Տե՛ս նույն տեղում, թ. 9:

Հայկական հրաձգային 2-րդ դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Արեշյանը 1918 թ. փետրվարի 3-ին հայտնում է Ալ. Խատիսյանին, որ հունվարի 30-ին ինքը և դիվիզիայի շտաբը, համաձայն Հայկական կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանի կարգադրության, ժամանել ու տեղակայվել են Ալեքսանդրապոլում[66]:

Փետրվարի 19-ին Ալեքսանդրապոլի քաղաքային միլիցիայի պետը տեղեկացնում է Ալ. Խատիսյանին, որ լիարժեք կարգ ու կանոն հաստատելու նպատակով քաղաքին անհրաժեշտ է մեծացնել միլիցիայի հաստիքաչափը, ուստի և հայցում է հատուկ ֆինանսական միջոցներ տրամադրել[67]: Ապրիլի 4-ին Հայոց ազգային խորհուրդը հայտնում է Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությանը, որ տեղի գաղթականական կոմիտեն կազմալուծվել է և բարձրացնում էր նոր մարմնի ձևավորման հարցը[68]:

Ապրիլի 10-ին ռազմահեղափոխական տրիբունալի նախագահ Քիշմիշևը Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունից խնդրում է հայտնել, թե քաղաքից ով է ընտրվել ռազմահեղափոխական տրիբունալի անդամ[69]:

Եվ վերջապես, ավելի վաղ, մարտին, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության ներքին գործերի բաժինը Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի աշխատակից Դ. Գորդեևին տալիս է վկայագիր առ այն, որ քաղաքի վարչությունը նրանից ստացել է և ընդունել ի պահպանություն Անիի հնությունների թանգարանի դրամագիտական հավաքածուից մեկ արկղ[70]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին, քաղաքների Համառուսաստանյան միության կովկասյան բաժանմունքը զգա-

---

[66] Տե՛ս նույն տեղում, գ. 2610, թ. 21:
[67] Տե՛ս նույն տեղում, գ. 2588, թ. 37:
[68] Տե՛ս նույն տեղում, գ. 2587, թ. 48:
[69] Տե՛ս նույն տեղում, թ. 49:
[70] Տե՛ս նույն տեղում, գ. 2704, թ. 24:

լի աշխատանքներ իրականացրեց իր գործառույթների շրջանակներում և Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած արևմտահայ գաղթականության օգնության տարաբնույթ հիմնախնդիրների շրջանակներում:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո, ի տարբերություն համառուսաստանյան ղեկավար և քույր կազմակերպությունների, Քաղաքների միության Կովկասյան կենտրոնական կոմիտեն ու բյուրոն գործեցին մինչև 1918 թ. անկախությունների շրջանը, ավելի ստույգ՝ մինչև 1918 թ. ապրիլի վերջը:

Կովկասյան բաժանմունքի գործունեությունն առանձնանում է հայազգի գործիչների գերակայությամբ, անմնացորդ նվիրումի դրսևորումներով և, իհարկե, Ալեքսանդր Խատիսյանի ակտիվ աշխատանքով:

ДЕЯТЕЛЬНОСТЬ КАВКАЗСКОГО ОТДЕЛЕНИЯ ВСЕРОССИЙСКОГО СОЮЗА ГОРОДОВ В 1915–1918 ГГ.

МЕЛИКЯН В.

Резюме

Ключевые слова: Земский союз, Союз Всероссийских городов, А. Хатисян, Николай 2-ой, Е. Воронцова-Дашкова, западноармянское беженство, Тифлис.

В начале Первой мировой войны в России образовались общественные организации для содействия царской администрации в деле успешного ведения войны и организации тыла. Таковыми являются Всероссийский земский союз, Всероссийский союз городов и Военно-промышленные коммитеты.

В октябре-ноябре 1914 года в Тифлисе было создано Кавказское отделение Всероссийского союза городов, которое возглавил градоначальник Александр Хатисян.

Кавказское отделение Согора в 1915–1918 гг. осущесвило существенную работу в рамках своих полномочий и функций и, в частности, в контексте помощи пострадавшим вследствие Армянского геноцида западноармянским беженцам.

После большевитского переворота, в отличие от Всероссийских организаций, Кавказское отделение Согора действовало до конца апреля 1918 года.

THE ACTIVITIES OF THE CAUCASUS BRANCH OF THE ALL-RUSSIAN UNION OF CITIES IN 1915–1918

MELIKYAN V.

Summary

Keywords: Zemsky Union, Union of All-Russian Cities, A. Khatisyan, Nicholas the Second, E. Vorontsova-Dashkova, West Armenian refugees, Tbilisi.

At the beginning of the First World War, public organizations were formed in Russia to help the tsarist administration conduct the war successfully and organize the rear. These were the All-Russian Zemstvo Union, the All-Russian Union of Cities and the Military Industrial Committees. In October-November 1914, the Caucasian branch of the All-Russian Union of Cities was established in Tiflis under the leadership of Mayor Alexander Khatisyan.

In 1915–1918, the Caucasian branch of Sogor carried out significant work within the framework of its powers and functions, especially in the context of helping the Western Armenian refugees who suffered as a result of the Armenian Genocide.

After the Bolshevik coup, the Caucasian branch of Sogor, unlike the All-Russian organizations, operated until the end of April 1918.